

Թէ սէրը հետապնդէ կամ հարբս-
տութեան ու յաջողութեանց ետեւէն
վազէ, հակազդեցութիւնը միեւնոյնն
է: Արբեցութիւնը զոր ասկից կը գգայ,
այնքան վաղանցուկ է, որ կը նմանի
զազթող թռչուններուն որոնք ճիւղի մը

վրայ բոսէ մը կը հանգչին, յետոյ կը
թռչին, մերթ՝ այլ եւս երբեք չզառնա-
լու համար:

ՎԻՔԹՈՐԻԱ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Աղեքսանդրիա

Հ Ե Ր Ո Ս Ը

Պանդոկին դուռը անօթի շան պէս

Կըզակները բաց՝ լուռ կը յօրանջէ:

— Կ'ուզե՞ս որ բարեւ ըսեմք այս դըրան:

— Ո՛չ, ներսը մութ է, մութէն կը վախնամ:

— Մութն իմ հոգիս է, աշխարհը յիմար

Խըլեց լոյսն անկէ, ըրաւ գիս դատարկ:

— Կը վախնամ քեզմէ, աչքերդ անդունդ են:

— Այդ անդունդին մէջ քաղցած քափօրներ

Դըրօշակ պարզած՝ յառա՛ջ կը պոռան:

— Կ'ուզեմ որ բարեւ ըսեմք այս դըրան,

Քու խաւարին մէջ ինձ պէսներ շատ կան:

— Բայց իմ խաւարս անբոց կըրակ է,

Կը մարէ լոյսը, նոր լոյս կը սփռէ՝

Հոգիս այն ատեն կը դառնայ արեւ:

Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ

Փարիզ, 1929